«Դմանաց վիմամ վճարադ մայթ
Կանչում ելին հըրաշալիւմ-մի դոկ
Հընչուններով դըութական, յով-յով
Ու հենց շողաց ցուքն արեի
Անտես, անհետ վըքացան:

Եղաս չմամայ և զմենյումած մէյ և Շ
Խորամացւակեցին ակն առբյութերում
Մըտանկոկանին հաժամարունքառ
Ու մեռնալին վըտակների և ա յան
Ալիքները պաղպաջուն, մա յան
Նարիմայ դմա միլաք մամդաք նացմա ու
ամբ միւռու մակուդ վայշը դմա յագը
նառչմայ և ըմաղյա՞ս և լմիմ եւաք

ԱՐԱՋԻՆ ՑԵՐԳ

I

Կանչում ե կըրկին, կանչում անդադար
Են չըքնաղ յերկրի կարոտը անքուն,
Ու թեկերն ահա փըռած տիրաբար՝
Թըռչում ե հոգիս, թըռչում դեպի տուն։
Ուր վոր հայրենի ոջախի առաջ
Վաղուց կարոտով ըսպասում են ինձ,
Ու ձըմուն յերկար գիշերը նըստած
Խոսում են Լոռու հին-հին քաջերից։

Դեպ են սարերը, վոր վես, վիթխարի,
Հարբած շարքերով բըռնած շուրջպարի,
Հըսկա շուրջպարի բըռնած յերկընքում,
Հըրճվում են, ասես են մեծ հարսանքում
Պերճ Արագածի նազելի դըստեր,
Վոր Դե-Ալ, Դե-Բեթ և ալլ հըսկաներ,
Խոլ-խոլ հըսկաներ հընոց աշխարհի,
Փախցըրին բերին անառիկ Լոռի։

II

Ել հին ծանոթներ, Ել կանանչ սարեր,
Ահա ձեղ տեսա ու միտըս ընկան,
Առաջըս յեկան յերջանիկ որեր,
Սիլ ելի դեմքեր, վոր հիմի չըկան։
Անցել են, վոնց վոր ծաղկունքը պես-պես,
Վոր անցած գարնան կալին ձեր լանջում։
Անցել ձեր գըլխի հերգվան ձյունի պես,
Բայց յեկել եմ լես՝ նըրանց եմ կանչում։

Վողջուն ձեզ, կլանքիս անդրանիկ հուշեր,
 Վորբացած հոգիս վողջունում և ձեզ,
 Թըոչուն կարոտով փընտրում ձոր ու լեռ,
 Դութական ձայնով կանչում և հանդիս:
 Դուրս լեկեք կըրկին շիրմից, խավարից,
 Դուրս լեկեք տեսնեմ, շոշափեմ, լըսեմ,
 Կլանքով շընչեցեք, ապրեցեք նորից,
 Լըցրեք պոետի հաճույքը վըսեմ...

III

Յել մութ ալրերից մամուռտ ժայռերի,
 Թավուտ ծըմակի լրոին խորքերից
 Մանուկ հասակիս հընչուն ծիծաղի
 Արձագանքն ահա լըսում եմ նորից:
 Թընդում և զըվարթ աղմուկը բինի.
 Բարձրանում և ծուխն իմ ծանոթ ուրթից,
 Ու բոլորն, ահա, նորից կենդանի
 Յելնում են աշխույժ վաղորդյան մութից,
 Ու թարմ, ցողապատ լեռների լանջում...
 Սու... ականջ արա, — հովիմն և կանչում

IV

— Աղջի, անաստված, նըստիր վըրս
 Ի՞նչ ես դուրս գալիս, խելքամաղ ան
 Աշուղ ես շինել, չեմ հանգըստանու
 Խաղեր կապելով,
 Չոլեր չափելով,
 Վոչխարըս անտեր,
 Ընկել եմ հանդեր:

Աման, երեցիր սիրտըս քու սիրով,
 Վոտըս կապեցիր սիրութել մակերով, և և նյրոյ
 ել չեմ դիմանուլ, կը փախցնեմ դոռովի, ըստով
 Ա՛յ մաքիր աղջիկ, ուղարձի խոսողաք մայզոց
 Ա՛յ սիրութ աղջիկ, ուղարձաք խոմշան մայտանուց
 Ա՛յ դու կը ամրաթութենչը մժիղը գայնի սյան
 Թուխամաղ Անուշաց, համսնու գայնի սյան
 Քյոյս գայցարաս ուղարձաք խոմայ սյան
 Քու հերն ու մերը թե վոր ինձ չըտան գայցը
 Արին կը թափեմ լես գետի նըման.
 Սարերը կը նկնեմ կորչեմ անգյուտան,
 Ա՛յ սև աչքերով,
 Ա՛յ ծով աչքերով, սոսնան ցիղմայա նյրու իմծ
 Ունքերը կը մարդու միոց էլիտեց ուրութ
 Աղջիկ քեզ համար ուղարձաք սյիլասան քրուան
 ցյոյս իմ հասոց ածա մցւարանը
 Ամիս ցըւուրա նյախը և հայրաց Պերը պատմաց
 Թերը ու Սարոնց ու Հի կարենում
 Աղջիկը հանգիստ նըստի վըրանում:
 — Են մի եր, նանի, մոր կանչում եր մեզ ած
 Դու չես իմանում... ականջ արա, տեսաց ալ
 — Հերիք ե, Անուշ, ներս արի դագեն, ...առն Ա
 Քանի դուրս թըռչես, նայես դես ու դեն,
 Տեսնողն ել կասի — ի՞նչ աղջիկ ե սա...
 Հազար մարդի մոտ կերթա կը խոսա:
 — Մը մի մուռը, նանի, են նարի լանջին —
 Ի՞նչ մանավրէկ են մալիս կաթամնցին... ու չո՞ր
 Նանի, թող գընամ քաղեմ ու հիտուեմ բայց
 Են սարի լանջին «Չան գյուլում» ասեմք մրան
 — Հանգիստ կաց, Անուշ, դու համաժաղջիկ և
 Ի՞նչ ունիս ջահել չոբանների միտ, սցուտըն և
 յուրաման և յայիս

Նըստիր վըրանում, քու գործին մըտիկ,
Պարկեշտ կաց, աղջիս, ամոթ ե ամոթ:
— Ա՛խ, սիրաբս, նանի, չը գիտեմ ընչի,
Մին լաց ե լինում սևակնած, տըխորւր,
Մին թե ե պռնում, ուղում ե թըռչի,
Չըդիտեմ՝ թե թէր, չըդիտեմ՝ թե ուր...
Նանի ջան, նանի, յանչափկատ անեմ,
Ի՞նչ անի անքուն, անհամագիստ բալեդ.
Նանի ջան, նանի, կուժը թող առնեմ
Աղբուրը գընամ աղջիկների հետ....»

Անաձ նմն դրվաս հմամ խառար մի
Կըժերն ուսած՝ թըռվըռալով
Զուրն հն իջնում աղջիկներ,
Խընդում իրար ուսի տալով,
Յերգը զընգում սարն ի վեր,
— Ամպի տակից ջուր ե կալի, արած
Իոշ ե տալի, վըրվըրում.
Են հւմ յարն ե նըստած լալի
աղյու քրան ուսումնած լալի
Հոնգուր-հոնգուր են մարում,
միտաքած դուռն, միտմբ վյոհ մի
Ալպակադ ջըրեր, գործիս ջըրեր, մամ
Վարդագալիս եք սարերից, վըր. —
Գալիս անցնում մանսդունչ չուներ, վըր.
Յարմանեկ թըրմեց եղ ջըրից, վըր.
... յմացք եւոյամ սաց յմացք յաց սաց
« Յարաբ իրմէց, յարաբ հովցավ, վըր.
Ամոված սիրաբ են յարի, յարաբ յարաբ
Յարաբ, հավանի, յարաբ անցնի, մի
Անքուն ցավը ջիգարի...»

— Աղջի՛, քու յարն լեկալ անցավ
Վառված, տարված քու սիրով,
Երված ջիգյարն՝ լեկավ անցավ,
Զըհովացավ պաղ զըրով...»

Ամպի տակից ջուր ե գալի,
Դոշ ե տալի, փըրփըրում.
Ա՛խ, իմ աղիղ յարն ե լալի
Հոնգուր-հոնգուր են սարում:

VII

Ու պառավ նանի սըրտի մեջ հանկարծ
Զեն տըվավ թաքուն մի խավար կասկած.
— Են լերբ եր՝ Անուշն իր կուժը առալ,
Աղբուրը գընաց ու լետ չըդառավ...
Ամպերն լեկել են սարերը պատել
Զորերը լըցվել իրար փաթաթվել
Հազար չար ու շառ, հազար հարամի,
Հազար ջահելներ վըխտում են հիմի...»
Ու լելավ տեղից պառավը հանկարծ.
— Ո՞ւր կորար, Անուշ, ալ մազըդ կտրած...»
Ու ձորի գըլսին, ձեռքը ճակատին,
Կանչում ե, կանչում անահ զավակին.
— Աղջի՛, սևասիրտ, քու ահը կըտրի.
Աղջիկը մենակ ձմբը կըմըտնի:
Ամպը կոխել ե, աշխարքը մըթնել
Ի՞նչ ես կորցըրել, չես կարում գըտնել...
Աղջի՛, հետ Անուշ, ալ աղջի՛, Անուշ...»
Ծընկանը զարկում, հառաչում ե «վուշ»,
Ու ձորի գըլսին մոլորված կանզնած

Նայում ե ներքե սիրտը սևակնած:
 Ամպերն լեկել են սարերը պատել;
 Զորերը լցվել իրար փաթաթվել
 Հազար չար ու շառ, հազար հարամի,
 Հազար ջահելներ վըխտում են հիմի:

VIII

— Թհղ, կանչում են ինձ... մերըս կիմանա...
 — Չե, Անուշ, քիչ ել, մի քիչ ել մընա...
 — Չե, թող լես գնամ... միս, ինչ խենթ եմ լես...
 Դու ինձ չես սիրում, չես սիրում ինձ պես,
 Հենց լես եմ մենակ լալիս ու տանջվում,
 Դու սարի լանջին խաղեր ես կանչում...
 Վաղմւց, վաղուց նո դու ինձ մոռացել...
 Յես լերը եմ լեկել եստեղ քարացել
 Ու մընում եմ քեզ, մընում, անիրամի,
 Ենքան մընացի՝ աչքըս ջուր դառավ.

Ինձ չես լըսում,
 Չես ափսոսում,
 Ել չես ասում
 Ինչ կը լինեմ լես...
 Յես կը վառվեմ,
 Հուր կը դառնամ,
 Յես կը հալվեմ,
 Զուր կը դառնամ,
 Յես չը գիտեմ
 Ինչ կը դառնամ,
 Թե վոր մին ել
 Եսպես մընամ...

Ասում են՝ ուղին
 Աղջիկ եր ինձ պես,
 Մընում եր յարին,
 Ու չեկավ նա տես:
 Խեղճը դողալով
 Անհույս կըռացավ,
 Դարդից չորացավ,
 Ուռենի դարձավ:
 Զըրերի վըրա
 Դըլուխը կախած
 Դեռ դողում ե նաև
 Ու լալիս կամաց,
 Ու ամբողջ տարին
 Մի միտք ե անում,
 Թե յարը յարին
 Վոնց ե մոռանում...

— Ա՛խ, Անուշ, Անուշ, եղ ի՞նչ ես ասում.
 Բա դու չե՞ս լըսում.
 Են, վոր լանջերին խաղեր եմ ասում,
 Ում հետ եմ խոսում...
 Են, վոր գիշերով շըհու լեմ փըչում,
 Են մւմ եմ կանչում...
 Են, վոր մոլորված նըստած եմ մընում,
 Ում հետ եմ լինում...
 Են, վոր հառաջում ու ախ եմ քաշում,
 Են մւմ եմ հիշում...
 Ա՛խ, Անուշ, Անուշ, անաստված Անուշ...»
 Արբեցած, անուժ
 Հառաջեց հովիմը ու սըրտին ընկավ,
 Հալվեցավ, հանգմավ...

IX

— Անուշ, այ աղջի՛, Անուշ, տուն արի...»
 Կանչում ե մերը, հառաչում, կանչում:
 — Գալիս եմ, գալի՛ս, գալիս եմ, նանի...»
 Զորից աղջկա ձենն ե զողանջում:
 Ու մազերն անկարգ տրված թիկունքով
 Ու ցըրված շիկնած պատերի վըրան,
 Դուրս յեկավ թեթև ամպերի տակից
 Անուշը՝ փախած յեղնիկի նըման:
 Նա կուժը դատարկ յետ բերավ կըրկին,
 Իսկ ուսին տարած ուսազոր չըկա,
 Թողել ե են ել ջրբիշեղերքին, այնաւ
 Ա՛խ, անհոգություն ջտհել աղջկաւած
 — Նանի, վախեցի, գանդատվում ենա,
 Ցեվ ուզում ե լալ, չի կարողանում:
 — Նանի, ներքեսում յես մարդիկ տեսա,
 Կարծեցի՝ թուրքեր ելին լողանում...»
 Անիծում ե ծեր մերը բարկացած
 Իրեն մոռացկոտ, վախկոտ Անուշին,
 Ու անհեծք տալով իշուում ե նա ցած
 Դատարկ յետ բերած հին կուժը ուսին:
 8ԵՐԿՐՈՐԴ 8ԵՐԳ

X

(ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԱՌԱՎՈՏԸ)

Համբարձումն յեկավ, ծաղկունքը ալվան
 Չուզել են հանդեր նախշուն գորգերով.
 Փունջ-փունջ աղջիկներ սարերը լիւան
 Վիճակ հանելու աշխույժ լերգերով:

ՀՀամբարձում, լնլլա,

Յալլա ջան, լնլլա,

Մե սարեր, լնլլա,

Յալլա ջան, լնլլա:

Յերդ ու բուլը խառնած,

Թիւթեի ըրոնած

Զուզում են լեռներ,

Ծաղիկ են քաղում,

Ծաղիկ հետ խաղում,

Ենչպես թիթեռներ:

Համբարձում, լնլլա,

Յալլա ջան, լնլլա,

Լավ որեր, լնլլա,

Յալլա ջան, լնլլա:

Յեկավ համբարձում

Ծաղկով զարդարված,

Մեր քախտին հարցում:

— Ո՞վ ե մեզ գլուխած:

— Ա՛յ ջան աղա, չոքան աղաք մւմն ես դու:
Աստված գիտի, աշխարհ գիտի՝ իմն ես դու:

Դե հանիք, աղջի,

Վիճակն ի քարին,

Յերգերով գովենք

Են իգիթ լարին:

— Բեղը ծիլ-ծիլ, բոլը թիլ-թիլ են լարի,
Ենչ դարդ ունեմ քանի նա կա աշխարհի:

Համբարձում, լալա,
Յալա ջան, լալա,
Հուր սըրտեր, լալա,
Յալա ջան, լալա.

Թընդում են լերգեր, խընդում են սըրտեր,
Աւ շուրջ բոլորած վիճակ են հանում,
Յենում ե մեկին իր լերս զն ու սեր,
Մյուսի մուրազը սըրտումն ե մընում:

XX

Պըտույտ երտալիս վիճակը նորից
Քուշուշքը գըլսին ծաղիկ Ծաղկամեր,
Թընդում «ջան գյուլում» մատաղ սըրտերից,
Հետը գըվգըվում են ծաղկոտ սարեր:

«Ա՛յ թուխս մաղավոր աղջիկ,
Ա՛յ սարի սովոր աղջիկ,
Զիգլարին գյուլա դիպչի
Քեզ սիրի ով վոր աղջիկ:»

— Վո՞հ, ի՞նչ սև վիճակ քեզ բաժին ընկավ,
Սկաբախստ քուրիկ, նազելի Անուշ.
Քու ձեռը կոտրի, ով վոր հանեցիր...»
Ու վողջ մընացին մոլորված, ապուշ:

— Սուտ բան ե, քուրիկ, դու մի՞ հավատար,
Լոկ պատահական մի չար խոսք ե սա.
Սիրտը մի կոտրի սուտ բանի համար,
Քու խաղըդ խաղա, ջան գյուլում ասա:

— Ա՛խ, չե, լես գիտեմ, լես բախտ չի ունեմ.
 Յես լերբեք, լերբեք բախտ չիմ ունեցել...
 Յես միշտ ել եսպես անբախտ կը վինեմ.
 Մանուկ որից են դեռ ինձ անիծել:
 Ասում են՝ մի որ, լես որորոցում,
 Մի պառավ գարվիշ մեր դրուն և պալի
 իր խաղն ասում եռու բաժին ուզում չդրուց ո՞ւ
 իմ նանը նըրան բաժին չի տամեն և նույնութ
 — Կորին, ասում եւ երբի մեր գրանից ժառը
 Յերեխաս ճաքեց, հեռացիր, գընա...»
 Ու դարվիշն ենտեղ անիծում եւ ինձ,
 Թե՛ դըրա որը լացով անց կենա...
 Ա՛խ, են գարվիշի անենքին անգութ ուրուց
 Ու ես վիճակին մեղյակե Ասամիած ցացոցուն
 Ակապս, եր միշտ մակա սիրոցը ել միշտովութ,
 Ինչ կա, ցըգիտեմ, իմ առջև ապահվութը դամք

— Մի տըրամիր, Անհեշ մի լինիր համառ,
 Մեր ձեռքով հանգի մի առնմիտ լիճակ,
 Մի խելառ դարվիշ, մի ամսեծք միմար,
 Ու լալիս ես դուեդովես սըրտմաճք...
 Հանգիստ կաց, քուրիկ, մի վախիր եղքան,
 Կլամքը քեզ համար վառ դարուն եւ դեռ, —
 Եդ քո նորահամ մասուղ կըւսության այսամ
 Առաջեւ դեռ կան լերջանիկ հընքը ցուն առ
 Սուտ բան եւ, քուրիկ, կու մի հավատար,
 Լոկ պատահական մի ճար խոսք ես սա.
 — Միրտըդ մի կոտրի սուտ բանի, համար,
 Քու խղըդ խացա, ջան գոուլում ասա,
 ասա և ոյցուք մաջ այսակ իրցյաց առն

(ԽՈՒՄԲԸ ՑԵՐԳՈՒՄ Ե)

Աղջի, բախտավհը,
Երնեկ քու սերին,
Քու սարի սովոր
Սև-սև աչքերին:

Համբարձում, լալա,
Յալա ջան, լալա,
Սեր-որեր, լալա,
Յալա ջան, լալա:

Մեռնեմ գարունքիդ,
Ծաղկած գարուն ես,
Սարի պես մեջքիդ
Կանգնած լար ունես:

Համբարձում, լալա,
Յալա ջան, լալա,
Սար-լարեր, լալա,
Յալա ջան, լալա:

(ԱՆՈՒՅՆ ՄԵԽԱԿ)

Ախ, իմ բախտը կանչում ե ինձ՝
Չեմ հասկանում դեպի ուր...
Դողում ե պաղ նըրա ձենից
Իմ սիրտը սև ու տխուր:

Դուք ել, սարի սիրուն ծաղկունք,
Թաքուն մի ցավ ունիք լուռ,
Աչիկներըդ լիքն ե արցունք,
Սիրտներըդ սև ու տըխուր:

ԱՌիս, ծաղիկներն ես աշխարհքում
Տանջվում են միշտ եսպես զուր,
Ծըրորվում են ու թառամում
Միւտները սև ու տըխուր:

(ԽՈՒՄՐԸ ՀԵՌԿԻՑ)

Համբարձում, լալա,
Յալա ջան, լալա,
Վառ ցավեր, լալա,
Յալա ջան, լալա:

ՅԵՐՅՈՐԴ ՅԵՐԳ

XII

Զըմբան մի գիշեր կար մի հարսանիք,
Հըրճվում եր անզուսպ ամբոխը գյուղի.
Գյուղն ելին իջել հովիվ պատանիք
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի:
Ու պարից հետո լեն հըրապարակ
Բաց արին մեջ տեղն արձակ գըլխատան,
Զուռնաչին փըչեց կոխի յեղանակ,
Ահել ու ջահել իրարով անցան:
Հարակ են տալի — «Քաշի՞ հա, քաշի...»
Ու դուրս քաշեցին զոռով յերկուսին.
Մինը մեր Սարոն, իսկ մլուսն Անուշի
Անդրանիկ յեղբալը, գառնարած Մոսին:
Կողջ գյուղը կանգնեց պարըսպի նման,
Զոկվեց, բաժանվեց յերկու բանակի,
Ամեն մի բանակն ընտրեց փառլեան,
Կանգնեց թիկունքին տըղերանց մեկի:

Գոռում են, գոչում յերկու բանակից.
 — Սըրտապինդ կացեք, մի վախեք, տըղերք,
 Իսկ նորեկ հարսի փարզի քամակից
 Նայում են կանգնած հարսն ու աղջըկերք:
 Ու տաքանում են տըղերքը սաստիկ,
 Փեշերը հավաք խըրում են գոտին,
 Գետին են զարկում ձեռները հաստվիկ,
 Իրար են համնում թափով մոլեզին...
 Արաթ կա սական են մութ ձորերում,
 Ու միշտ հընազանդ հընոց աղաթին,
 Ամրոխի առջե իդիմն իր որում
 Գետին չե զարկել ընկեր իգիթին:
 Ու իրար բըռնած Սարոն ու Մոսին
 Քաշում են, ընկնում խողապարկումի,
 Ընկնում են գետին, լելնում միամին,
 Դըժվար ե իրեն հաղթել մեկ մեկի:
 Իզուր ե գոռում ամրոխը հարբած,
 Զուր սըրտատըրոփ նայում աղջիկներ,
 Յեվ զուր և Անուշն իր շունչը կըտրած,
 Սառել ու կանգնել ինչպես մի պատկեր,
 Անուշը կանգնած... Սարոն նըկատեց,
 Թունդ առավ սիրտը ու զարկեց արագ.
 Աչքերի առջե մըլարը պատեց,
 Մոռացավ ընկեր, աղաթ ու աշխարք:
 Ու մինչդեռ Մոսին ընկերախաղի,
 Կատակի տալով թողած եր իրեն,
 Ուժ արավ Սարոն, ծընկեց կատաղի,
 Գետնեց ընկերին, ու չոքեց վըրեն:
 Ամրոխը թափվեց հարահըրոցով,
 Վեր թըռոցը ջահել փահլեաններին,

Յեկ՝ ուրախության աղմուկ գոռոցով
 Հաղթողին փեսի թախտի մոտ ըերին:
 Ցընծության ձայնից, ծափերի զարկից
 Շարժվում են դողում պատեր ու ոճորք,
 Իսկ նորեկ հարսի փարզի քամակից
 Նալում են կանգնած հարսն ու աղջրկերք:

XIII

Վեր կացավ Մոսին. իրեն կըտրատում,
 — Թող գա, գոռում ե, վոր բըռնենք նորից,
 Թե չե նամարդը, արևս եմ յերդվում,
 Ել չի պըրծնելու յերբեք իմ ձեռից:
 Վեր չի գցել ինձ... ինձ խարել ե նա...
 Մելդան բաց արեք, թող մին ել մեջ գա...»
 Ու ամեն կողմից ուրախ հըրհում,
 Թունալի ծաղրով կանչում են, գոռում.

— Զելավ, եղ չելավ,
 Վեր չի գըցել դեռ,
 Մոսին թու ելավ —
 Խողապարկուկ եր...
 Հա, հա, հա, տըղերք,
 Շատ ել լավ կանի.
 Մեջքը թափ տըվեք,
 Թող մին ել բըռնի...
 Հա, հա, հա, տըղերք,
 Մեջքը թափ տըվեք...»

XIV

Յեկ աղմըկալի հարսանքի տանից
 Դուրս յեկավ Մոսին սաստիկ վիրավոր.

Արլուն և կաթում սեակնած սըրտից յ ս սծ
 Գընում և բարապ, քալիրը մոլոր՝
 — Անթ քեզ Մոսի, Թուք ու նախատինք,
 Ամժթ քեզ նըման դոված իգիթին,
 Միանունց հիւերք մի բոլիդ մըտիկ
 Դեռ քու թիկունք չեր տեսել գետին:
 Ի՞նչպես վեր բնկար դու պարի նըման,
 Յերբում նայում եղ վողջ գուղը կանգնած:
 Դու... կուչ դաս տակին Աարուի ծընկանց —
 Նըրանից հետո յերեաս կանանց...
 Յեկած եր ես բանն իսկի քու գըլիսին... աճէ յը
 Մաղրատեղ դառար դովանդակ գեղին... աճէ յը
 Դե մեռիր կի՞ գետինք մըտիր...
 Տանը վեր բնկիր՝ իմիկ պըտըտիր...»

XV 17X

— Վար, վայ, Մոսի ջան, ինձ մի բսպանիր Յ
 Սըրանից հետո չեմ պիրիլ նըրան...
 Վախենում իմ լիս... դամեղ տեղը գիր... յամիւն
 Սիրտըս դոզում և տերեկի նըման...»
 Խընդում եղ լալով կեղթոր պաշին
 Անզոր ու դալուկ իր քուլը չոքած,
 Մոսին՝ փալիկըտուն խանչալը ձեռին
 Ուզում եղ մորթել նըրան աչքը բաց:
 — Դե լոմ անունով յերդվիր, անըզզամ,
 Վոր ել Մարուին դու չես սիրելու:
 Թե չե տեսնմում ես խանչալը հանած՝
 Մինչե դաստակը սիրտը եմ իւրեւու:
 — Քու վոտի հողն եմ, Մոսի ջան, Մոսի, ի՞ն
 Դու քու յեսիրին յերդմամ ես տալիս...» Այսքի

Յես ել Սարոյին չեմ սիրում՝ ասի,
 Տեսնում ես չոքած ի՞նչպես եմ լավիս...
 — Դու խարժւմ ես ի՞նձ, սուտլիկ խարերա...
 Զես սիրում ասիր. են ի՞նչ ե հապա,
 են ի՞նչ ե հապա, վոր տեղն ենք մըտնում
 Հեկեկում ես դու գիշերվա մըթնում.
 Են ի՞նչ ե հապա, վոր դու յերազում
 «Մարտ ջան, Մարտ, Մարտ» լիս ասում...
 — Մոսի ջան, Մոսի, գլխովըդ ջուռ դամ.
 Ինձ մի ըսպանիր, ինձ թհղ ես անզամ.
 Ել չեմ սիրիլ լիս, լերը դու չես ուզում,
 Ել չեմ կանչիլ լիս նըրան յերազում...
 Ինձ մի ըսպանիր, զամեդ տար հեռու...
 Թու քուզը չեմ լիս... իմ Մոսին չեմ դու...

XVI

Ու են հարսանքից թըշնամի դարձան
 Ախպեր տըղերքը ես դեպքի համար.
 Ըսկեր, բարեկամ գընացին, լեկան,
 Կըրկին հաշտութիւն չեղավ. մի հընար:
 Անկոտրում Մոսին ել վմր Մոսին եր,
 Վոր՝ աչքը դեռ բաց, ես լուս աշխարքում,
 Իրեն հարազատ քրոջը տեսներ
 Նամարդ ընկերի — Սարոյի գըրկում:
 Գուցե գիշերս ել՝ իր հերսից անքուն
 Ուզում ե ջահել քըրոջն ըսպանի,
 Սարոյի անունն ու սերը թաքուն
 Խանչալի ծերով սրտիցը հանի:
 Ո՞վ գիտի, գուցե հենց նո դիշեր ել
 Իգիթ վոսոխներն, անհաշու ու համառ,

Մեկմեկու հոտից վոչխար են քըշել,
Մեկմեկից վըրեժ առնելու համար։
Կարող ե նույնպես պատահել հանկարծ,
Վոր մեկի գեղը, արդյունքը հընձի,
Գիշերվա ժամին հըրով բըռընկած,
Յերկնահատ բոցով աստղերը խանձի։

ԶՐԾՐՈՐԴ ՑԵՐԳ

XVII

Ամպերը դանդաղ ուզուերի նըման
Նոր են ջուր խըմած ձորից բարձրանում.
Քարոտ թիկունքից Զաթինդաղ լերան
Նոր ե արեց պըռունդը հանում։
Դյուզում աղմուկով իրար են անցնում,
Կըտեր ծերերին կանալք հավաքված,
Տըղերքը դեպի քարափն են վաղում
Հըրացանների կիսերից բըռնած։

XVIII

Յեկավ զիթխարի ծերունի մի մարդ,
Կանգնեց վըրդովմած տրդերանց միջին։
Մատը գեղի ձոր մեկնելով հանդարտ
Եսոյես նա պատմեց զոր տալով չիբսին։
— Ես գիշերի կեսը կրչներ գիշերվա,
Դեռ չելի կըպցրի աչքըս տեղի մէջ։
Քուս ել ե կորել, ջանս ել են վաղվա,
Ամեն մի բանից մընացել եմ խեղճ...
Հա, հալով կեսը կրչներ գիշերվա,
Շունը վերկացավ ես կըռան վըրա.

Հել հեկ կանչեցի, ձեն տըվող չելավ.
 Շունը գաղաղեց, շունը վեր կալավ...
 ՀԵԼ գիզի, ասի ինքըս իմ միջում,
 ի՞նչ ե մընացել առաջվան տըղեց:
 Քընում եմի վաղ մենակ արխաջում,
 Մի ձեն լըսելիս վեր թըռչում տեղից...
 Են ելի ասում, քընել չելի դեռ.
 Կը լիներ դառը գիշերվան կեսը...
 Յերկու մարդկալին ԱԿԱկերպարանքներ
 Շան առջև փախած՝ ցած իջան դեսը...
 Ես մըր լրսեցին, դեմ ու դեն դըրված
 Տըպերը ճեպրի ձորը ներս մըտան,
 Ու մըտի տակին, ճամակիցը ծըռված,
 Յերկու մարդու թարմ վոտնատեղ գըտսն.

այսած գրաբարք միջնադաս դաստի
XIX

Ամբողջ մի ամիս խումբը դինօվառ
 Սարեր ու ձորեր վոտնատակ տըվեց
 Չորան Սարովին գըտնելու համար,
 Վոր սարիցն իջավ Անուշին փախցրեց,
 Մի ամսից հետո տըղերքն յեկան տուն
 Գովելով նըրա արարքը ճարպիկ.
 — Հալալ ե տըղին, այ իգիթութիւնն,
 Ահա թե ինչպես կը փախցնեն աղջիկ:
 Մենակ Անուշի ախպերը — Մոսին
 Մընաց հանդերում. յերդում կերավ նա,
 Ուր վոր ել լինին՝ նըրանց միասին
 Գըտնի՝ կոտորի, սիրտը հովանա:
 Մնաց հանդերում: Յեկ ահա մի որ,
 Քաղվոր կանանց մեջ, մըթան հետ, թաքուն,

Շորերը պատռած, տխուր, գըլխակոր
Անուշը ձորէց լեկավ հորանց տուն:

XX

— Աղջի, Վարդիշաղ, թե հոգիդ սիրես,
Մի գարիդ գըցիր, տես ինչ ե ասում.
Աչքըս խավարի, տեսիլք գառնամ լես,—
Տեսիլք եմ տեսել գիշերս լերազում:
Մի մութ ձորի մեջ, մի նեղ ձորի մեջ,
Անրախտ Սարուի վոչխարը կանգնած,
Լեզու լեր առել ու խաղ եր կանչում,
Ու խաղ եր կանչում ձեն ձենի տըված...
Մի գարիդ գըցիր, թե վորդով խընդաս,
Ես լերազն իսկի լես լավ չեմ փորձել
Վողորմած Աստված, Թու դուռը բանաս,
Քու վոտի հողն ենք — Դու լես ըստեղծել...
Անրան գառները մութ ձորի միջին
Խաղ ելին կանչում ու ձենով լալիս,
Սարուի նանն ել նըրանց առաջին
Աղլուխ եր առել ու պար եր գալիս...
— Աղջի, Մանիշակ, վատ բան ես տեսել,
Գարիս ել, ահա, ենակես դուրս լեկավ.
Ես չարն, ես բարին... Սարոն ե ես ել...
Տես, ահա, Սարոն սև ճամբեն ընկավ...
Աստված խընալի ջահել-ջիվանին,
Աստված խընալի իր անրախտ նանին...

XXI

Ու ման ե դալի սարերը ընկած
Սարոն փախցրած լեղջերվի նըման,

Որահասն առաջին, գընդակն յետեից,
Հանդերը՝ դըժոխք, ընկերը՝ գուշման:

Եեվ յերբ յերեկոն հանդարտիկ ու լուս
Սարերից իջնում, խավարն և պատում,
Նըրա բայաթին վողբում և տըխուր,
Ընկեր սարերին խոսում, գանդատվում:

«Բարձըր սարեր, մի սարեր,
Զեն եմ տալի «վահ», սարեր,
Դուք ել ինձ հետ ձեն տըվեք,
Իմ դարդերի թալ սարեր:

Վորս եմ բութես ձեզ արած,
Զեր ձորերին, ձեզ արած,
Կուզեմ կորչեմ անդյուման,
Ես աշխարքից բեզարած:

Կորչեմ բեզար դատարկուն,
Քար-սարեսար դատարկուն,
Մեռնեմ պըրծնեմ ես որից,
Բալքի աւնեմ դադար-քուն:

Ա՛խ, կը մեռնեմ ամա նա
Վալ թե հանկարծ իմանա,
Յես աղատվեմ ես ցավից,
Աչքը լալով նա մընաւ»

ԵՒՆԳԵՐՈՒԴ ՅԵՐՎ

XXII

Լավիս և Անուշն լերեսին ընկած,
 Կանդնած են շուրջը կանալք հարնան,
 Ու խոսք չեն գըտնում ասեն անարդված,
 Տարած լետ բերած, անբախտ աղջրկան:
 Աստված խընալեց՝ կոպիտ ախպերը
 Հեռու հանդերից դեռ տուն չեր դարձել,
 Իսկ խոժոռագեմ ալեոր հերը
 Հսկավ փըրփըրած թըքել, անիծել:
 — Դուրս գընա, կորի՛, ալ վըր, անըզգամ,
 Սկ ու սուզ վինի թագ ու պսակըդ:
 Կորի՛, չերեաս աչքիս մշուս անգամ,
 Դետինը մըտնի լերկար հասակըդ:
 Տեսար, վոր նըրան ատում և Մոսին,
 Զեն ուզում, տեսար, նըրան հերն ու մերդ,
 Դու քմնի գըլուխ ունիս քո ուսին,
 Վոր վեր ես կենում փախչում նըրա հետւ
 Խոնըված գլուղացիք կըւուրից իջան
 Մեղմելու կոպիտ բարկությունը հոր,
 Հայտնըվեց նույնպես զլուզի քահանան,
 Մի պատկառելի հըսկա ալեոր:
 — Դուրս գընացեք, դուրս, գոչեց տերտերը,
 Անուշը թողեք ուզիզն ինձ ասի,
 Թողեք նա հայտնի իր միտքն ու սերը,
 Նըրանից հետո բանը կը պարզի:
 Մի լար, իմ աղջիկ, ինձ խոստովանիր,
 Միրմւմ ես նըրան, քու կամքնիլ փախար...
 Եեթե սիրում ես՝ ել դարդ մի անիր,

Պիտի պըսակեմ լես ձեղ անպատճառ...
— Ի՞նչ են հառաջում... են ով եր, մի տես,
Վոր դուրսը հանկարծ աղմըկեց հսպես...
Ո՞վ ե լսպանել... Մոսին... ում... ուր...
— Անուշ, հեզ Անուշ... ջուր հասցրեք, յուր...»

XXIII

Խոչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ,
Յերկընքի մըթնած ամպերից իշներ,
Խոչպես փոթորիկ սաստիկ սըընթաց,
Գլուղից սըլացան մի խումբ կըտրիճներ:
Ցավից տաքացած ել բան չեն հարցնում,
Թըռչում են, ասես ահից հալածված,
Ու նըրանց առջե ահոելի բացվում,
Թըշշում ե ձորը արկունով լրցված:
Գլուղը դատարկվեց մի ակընթարթում,
Քարափի գըլիսին կանգնած անհամբեր,
Լուռ, սըրտատըրով ականջ են դընում,
Նալում են ներքեն... ձեն չի գալիս դեռ.
Դերեղն ե մենակ անդընդում՝ հուզված՝
Խըլաձայն վողբով սողում դեպի ցած:

XXIV

Ու մարդասպանը դուրս լեկավ ձորից,
Դեմքը ալլալված, քալլվածքը մոլոր.
Սարսափ ե կաթում արնոտ աչքերից,
Ցեվ կերպարանքը փոխված ե բոլոր:
Առանց նալելու մարդկանց լերեսին,

Առանց խոսելու, սկակնած; դաժան,
Մոտեցավ սրահին, կախ տըվավ սընին
Սև հըրացանը, սև ոձի նըման:
Պապանձվեց նույնակս ամբոխը մեխված,
Վոչ վոք ծըպղտալ չի համարձակվում,
Մենակ մի հոգի անզուսպ կատաղած
Հարաց ե կանչում, լերեսը պոկում:
Մեռած չորանէի պառավ նանն ե նա
Ցավից խելադար բառաչում, լավիս.
Տարաբախտ ծընող, վազում ե ահա,
Չորիցն ե տըխուր գոռոցը գալիս:

XXV

Մըգավոր կանալք նըրա լետեկից
Հարաց կանչելով ձորը վազեցին,
Իրենց կորցրածն ել հիշելով նորից՝
Դիակի շուրջը կարգով շարվեցին:
Իգիթին վայել սըրտառուչ վողբով
Լաց ու կոծ արին ձեն ձենի տըված:
Տըղերքն ել մըթին, լուռ ու դըլխակոր,
Մընացին մոտիկ քարերին նըստած:
Վողբացին անշունչ դիակի վըրա,
Անտեր մընացած վոչխարի մասին,
Անսիրտ անեծքով հիշեցին նըրա
Անճար մընացած խեղճ լարի մասին:
Ցեվ նըրա մասին, վոր ընկերները
Հանդը գընալիս Սարո կը կանչեն,
Վոր սարից փախած սոված շըները
Կըտերը պիտի վոռնան, կըլանչեն:
Ծանըր չոմբախը, գըլուխը մեխած,

Աճորքում դրած պիտի մըրոտի,
 Յերկար խանչալը, ոլատիցը կախած,
 Պատեհում մընաւ ու ժանգը պատի...
 Վոր հով սարերի սովորած նանը
 Եւ սար չի գընալ առանց Սարոյի,
 Մև շորեր հաղած կը նըստի տանը,
 Անցած որերը մետը կը բերի:
 Յեվ ամեն մի խոսք, մի հիշողութիւն
 Կը արտօտում ելին սիրուը ծեր նանի,
 Յեվ աղաջում եր նա մեռած վորդուն
 Մի անդամ խոսի, աչքը բաց անիւ
 — Ընչի՞ չես խոսում, ընչի՞ չես նալում,
 Իմ որ ու արե, կյանք ու ջան՝ վորդի,
 Դու իմ գերեզմանն ընչի՞ չես խըլում,
 Թըշնամի վորդի, դավաճան վորդի...»
 Բայց չելին բացվում աչքերը փակված,
 Շուրթերը սառեր, չորացել ելին
 Նըրանց արանքից տտամները բաց
 Միպտակ շարքերով իերնում ելին:
 Ու նա կատաղած՝ հանդուզն անեծքով
 Մառս յեղավ դուշման յերկընքի պիմաց,
 Յեվ հայիոյում եր, և կուրծքը ծեծում,
 Յեվ լավս ելին ձեն ձենի տըված...
 «Կարմիր արեկից ընկած, Սարո ջան,
 Կանանչ տերկից ընկած, Սարո ջան...»
 Արես հանգավ, Սարո ջան,
 Գիշերս ընկավ, թանձրացավ մութը
 Ու նըվաղեցին ձեները տըրտում,

Հոգնեցի՞ն, հանումն... Ծերուկի Դերեղը
Սըդում եր մենակ խավար անդընդում:

Սըդվոր գետը
Ծեր Դերեղը,
Սիրտը քըրքըած,
Զուրը փըրփըրած,
Քարուտ ափին,
Լեռ քարափին
Դեռ ծեծում ե,
Հեծեծում ե...

XXVI

Յեվ մի քանի ընկերաւզերք
Զորում, գետի լեզերքին,
Փոս փորեցին ու սըրտաբեկ
Հողին տըմին հովմի դին:
Մառ ու ծաղիկ՝ սըմսըմալով
Բուլը խընկեցին դյուրեկան,
Ծեր Դերեղն ել ահեղ ձենով
Յերգեց վըսեմ շարական:
Ու աըղերքը տըխուր ու լուռ
Վերադարձան դեպի տուն,
Զորում թողած մի սև բըլուր,
Մի գերեզման անանուն:

ՎԵՏԵՐՈՐԴ ՏԵՐԴ

XXVII

Դարունը լեկավ, հավքերը լեկան,
Սարեր ու ձորեր ծաղիկներ հագան.
Հավ, Թաւմանյան—3

Մի աղջիկ լեկավ, մի մենակ քաղվոր,
Դետի լեզերքին շըրջում ե մոլոր,
Շըրջում ե մոլոր, խընդում ու լալիս,
Ցերգեր ե ասում ու ման ե գալիս:

— Սիրուն աղջիկ, ի՞նչ ես լալիս
Եղպես մենակ ու մոլոր,
Ի՞նչ ես լալիս ու ման գալիս
Ես ձորերում ամեն որ:
Թե լալիս ես՝ վարդ ես ուզում՝
Մալիս կը գա, մի քիչ կաց,
Թե լալիս ես՝ լարդ ես ուզում,
Այս նա գընաց, նա գընաց...
Արտասվելով, լալով եղպես
Յետ չես դարձնի ել գերիդ,
Ինչիւ իզուր հանգընում ես
Զահել կըրակն աչքերիդ:
Նըրա անբախտ շիրմի վըրա
Պաղ ջուր ածա աղբլուրի,
Դու ել գընա նոր սեր արա,
Եսպես ե կարգն աշխարհի:

— Շնորհակալ եմ, անցվեր ախապեր,
Աստված պահի քու լարին.
Ճամբիդ վերջում կանգնած ե դեռ
Անուշ ծիծաղն աչքերին...
Ուրախ սըրտով դուք ձեր սերը
Վալելեցեք անթառամ,
Ինձ արցունք ե տվել Տերը,
Յետ պիտի լամ, պիտի լամ...»

Ու ման ե գալիս,
 Յերգում ու լալիս:
 Յերգերը անկապ, յերգերը տըխուր,
 Արցունքի նման հոսում են իզուր.
 Բայց լալիս ե նա ու յերգեր ասում,
 Ու միշտ են անմիտ տրտունջն ե խոսում,
 Թէ ինչպես հանկարծ աշխարքը փոխվեց,
 Ինչպես դատարկվեց կյանքում ամեն բան,
 Սարերը մնացին վորբ ու անչորան,
 Թէ ինչպես հանկարծ նա գընաց հեռու,
 Ել չի դառնալու, ել չի դառնալու...
 «Ճետ դառ, յետ, իգիթ,
 Յետ դառ, անիրավ,
 Կարոտած լարիդ
 Աչքը ջուր դառավ:
 Վոչխարդ են սարով
 Շուռ տուր, տհւն արի,
 Փախիր գիշերով
 Ու թաքուն արի...»

Ա'իս, են կանանչ սարի լանջին
 Ով ե քընած են տըղեն,
 Վըրեն քաշած սև լափընջին
 Կուռը հանած են տըղեն...
 Ջան, իմ լարն ե, ջանին մեռնեմ,
 Մաղկի հոտով նա հարբել,
 Սարի լանջին, հովի միջին
 Մուշ-մուշ, անուշ մըրափել:

Վեր կաց, վեր, իդիթ,
 Վեր կաց, անիրանի,
 Վուշաբըդ բեր կիթ,
 Որը ճաշ դառավի...
 Արի, ջան, արի,
 Թու գալուն մեռնեմ,
 Թուխ չորան, արի,
 Կարոտըս առնեմ...

Տեսէք, տեսէք, դափ ու զուսնով
 Բոնչ հարսնիք և դուրս գալի,—
 Մարդիկ ուրախ, թոն ու ձլունով
 Զի լին խաղում, չափ տալի...
 Աղջի, աղջի, մըտիկ արեք,
 Ես ինչ տեսիլք յես տեսա.
 Բով եր տեսել եսովես հարսնիք —
 Վոչ հարս ունեն, վոչ փեսա...

Բերում են հըրեն
 Ամմն, մեր տան դեմ...
 Վեր գըրեք, վըրեն
 Հյուսելըս քանդեմ...
 Յես ել եմ գալիս,
 Եղ մւը եք տանում...
 Ինձ ել թաղեցեք

Եր գերեզմանում...
 Ակս, չէ, ամմն, ասում են դա
 Մի դիակ ե լրւո, հոտած,
 Արյունը չոր դեմքի վըրա,
 Աչքերն անթարթ, սիպտակած:

Նա սիրուն եր, անուշահոտ,
Աչքերը լի ծիծաղով,
Նո դալիս եր ցողոտ, շաղոտ,
Հանաքներով ու խաղով...

Արի, ջան իգիթ,
Արի, անիրամվ,
Կարստած յարիդ
Աչքը ջուր դառավ,
Ել մի ուշացնի,
Յես շատ եմ կացել,
Ել մի լացացնի,
Յես շատ եմ լացել...

Տես կը խըսովեմ,
Լաց կը եմ յես ել...
Չեմ խոսիլ քեզ հետ...
Չեմ սիրիլ քեզ ել...»

XXVIII


Անլըռելի վըշվըշում ե
Պըզտոր ջուրը Դերեղի,
Նըրա տփին կանաչում ե
Մենակ շիրիմն իգիթի:

Նըրա շուրջը հեգ սիրուհին
Թընդացնում ե վողբ ու լաց,
Ձեն ե տալիս իր Սարովին
Ու պըտըտվում մոլորված:
Ու հոսում ե գիշեր-ցերեկ
Արցունքն անրախտ աղջըկա,

Բալց իր սիրած տըղան յերբեք
 Զըկմ, չըկա ու չըկա...
 Վըշվըշում ե դետը — վ՛րւշ, վ՛րւշ,
 Ու հորձանք ե տալիս հորդ,
 Ու կանչում ե՝ «Արի՛, Անհրւշ,
 Արի՛, տանեմ յարիդ մոտ...»
 — Անուշ, ալ աղջի՛, Անուշ, տուն արի...»
 Կանչում ե մերը վերեկց, կանչում,
 Լուռ են ձորերը, լուռ են ահոելի,
 Դուշման Դերեղն ե մենակ մըունչում:
 Վուշ-վ՛րւշ, Անուշ, վուշ-վ՛րւշ, քուրի՛կ,
 Վ՛րւշ քու սերին, քու յարին,
 Վուշ-վ՛րւշ, Սարհ, վուշ-վ՛րւշ, իգիթ,
 Վ՛րւշ քու սիրած սարերին...

XXIX

Համբարձման գիշեր, են դյութիչ գիշեր,
 Կա հըրաշալի, լերջանիկ վայրկան.
 Բացվում են վոսկի լերկընքի դըռներ,
 Ներքէ պապանձում, լըռում ամեն բան,
 Ու աստվածալին անհաս՝ խորհըրդով
 Լըցվում բովանդակ նըրա սուրբ գըթով:
 Են վեհ վայրկենին չըքնաղ գիշերի՝
 Յերկընքի անհաւն, հեռու խորքերից
 Անմուրազ մեռած սիրահարների
 Աստղերը թըռած իրար են գալիս,
 Գալիս՝ կարոտով մի հեղ համբուրվում
 Աշխարհից հեռու, լազուր կամարում:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Օրադ.



FL0045264

A T
8287

(214.)
ԳԻՒԸ 35 Կ.
ԿԱԶՄԸ 20 Կ.



ՕՎ. ԹՈՄԱՆՅԱՆ
Պօэмան
ԳԻԶ ՀՀ Արմենիա Երևան